ընդ իւր զամենայն զոր ինչ պատուէր 'ի սպարապետէ իւրմէ, և 'ի ժամ պակասելոյ որում զօրագլխոյ որ իցէ զամենայն զոր ինչ նամակ և հրովարտակ և պատուէր և հրաման ստանասցէ տեղակալ ննջեցելոյն, զի կարի ունիցի լուս պատուիրանաց Տեառն իւրոյ 'ի վերայ գործի զօրաց իւրոց և այլն։

ԳԼՈՒԽ ՅԽ.

Ամենայն իշխան եթէ ծայրագոյն եթէ փոքրիկ պակասելով եթէ մահու, և կամ եթէ 'ի պատճառէ մեղաց, նոյնժամայն երկրորդ նորայ մտցի 'ի տեղի նորայ, և ամենեքեան ըստ կարգի հնազանդել նմայ պարտին որպէս առաջնում, մինչև վերստին հաստատեսցի նա 'ի տանէ հայոց նամակօք։

ԳԼՈՒԽ ՅԽԱ.

Ոչ ոք մտցէ 'ի պաշտօն տանուտէրութեան և ոչ իշխանութեան 'ի յայս, բաց նոքայ որ լինիցին ընտրեալ փոխանորդ 'ի դաւառէ իւրեանց ըստ Օրինօք հայաստանեաց։

ԳԼՈՒԽ ՅԽԲ.

Ամենայն վրէժխնդրութիւն 'ի միջի նախատողի և նախատեցելոյ պարտ է միմեանց երկուց անձամբ միայն լինի գիտութեամբ և ընդունե-